Ազգ
Azg armenian daily
24 ՓԵՏՐՈՒԱՐ 2001 ՇԱԲԱԹ 35 (2239)

## Թուրքիայի բանկային ճգնաժամը սպառնում է եվրոպական բանկային համակարգին

ԼՈՆԴՈՆ, 23 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Եվրոպական բանկերին լուրջ խնդիրներ են սպառնում Թուրքիայի բանկային ճգնաժամի պատճառով: Այս կարծիքին են հայտնում բրիտանական «Ֆայնենշլ թայմս» թերթում հրապարակված հոդվածի հեղինակները: Թուրքիայի արտաքին պարտքի ընդհանուր գումարը, փորձագետների գնահատմամբ, մոտ 110 մլրդ դոլար է: Այդ գումարի 70%-ից ավելին եվրոպական բանկերի տրամադրած վարկերն են: Ճգնաժամի պատճառով մի շարք թուրքական բանկերի եւ ընկերությունների իրենց պարտքերը սպասարկելու անկարողությունը կարող է հանգեցնել վիթխարի ֆինանսական կորուստների եվրոպական բանկերի համար, որոնք հանդես են գալիս որպես Թուրքիայի վարկատուներ, որոնցից խոշորագույնը գերմանական բանկերն են:

ԲԱՔՈՒ

## Հեյդար Ալիեւը մերժեց Մինսկի խմբի նախագծերը

*Եվ հայտարարեց, թե երկիրը պատրաստ է պատերազմի*

***Անշուշտ, առաջին անգամը չէ, որ Ադրբեջանը մերժում է Մինսկի խմբի առաջարկած «Ընդհանուր պետության» գաղափարը, սակայն Ալիեւի կողմից հենց Միլլի Մեջլիսում այդ մերժմանը «հանդիսավոր» հանգամանք տալը, ինչպես նաեւ նախորդ օրերին Բաքվի մամուլում կարգավորման տարբեր ծրագրերի իրարահաջորդ հրապարակումները վերլուծաբաններին առիթ են տալիս ծածկելու, որ Ալիեւը մտադիր է Ռ. Քոչարյանի հետ փարիզյան առաջիկա հանդիպման ընթացքում մերժել Մինսկի խմբի առաջարկը, վկա կանչելով... թող՝ Ադրբեջանում հասարակական կարծիքի ընդդիմությունը: Ինչ վերաբերում է պատերազմի ընտրանքին, ապա, կարծում ենք, կարգավորման հարցը չլուծելուն միտված քայլ է պարզապես:***

ԲԱՔՈՒ, 23 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ադրբեջանի Հանրապետության նախագահ Հեյդար Ալիեւը, այսօր ելույթ ունենալով հանրապետության Միլլի մեջլիսի նիստում, միանշանակ հայտարարեց, որ ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի առաջարկած նախագծերը չեն համապատասխանում Ադրբեջանի շահերին: Նա իր կարծիքը ամրապնդեց նրանով, որ եթե Ադրբեջանը ընդուներ «ընդհանուր պետության» մոդելը, ապա կարող էր կորցնել ինքնիշխանությունը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ: Ուստի նա ասաց, որ տվյալ փաստաթուղթը չի ընդունում նույնիսկ քննարկման:

Հանրապետության ղեկավարը դժգոհություն հայտնեց նաեւ մյուս փաստաթղթերի առթիվ: Նա ընդգծեց, որ համաձայնագրի տվյալ նախագծերը չեն կարող հիմք հանդիսանալ հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման համար, եւ Ադրբեջանը երբեք դրանք չի ընդունի: Նախագահը նաեւ հայտարարեց, թե ինքը՝ որպես պետության ղեկավար, երբեք չի ստորագրի հաշտության այնպիսի համաձայնագիր, որը հակասեր Ադրբեջանի ազգային շահերին:

Իր ելույթում նախագահը նույնիսկ հայտարարեց պատերազմի պատրաստ լինելու մասին: Նրա խոսքերով, Ադրբեջանն ուժեղ բանակ ունի, որով ցանկացած պահի կարելի է դիմել ռազմական եղանակով հակամարտության կարգավորման: Բայց, ավելացրեց նա, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այսօր հակամարտությունը խաղաղ միջոցներով կարգավորելու հեռանկարներ կան, առայժմ հարկ չկա կանխամտածված դիմելու կռիվների:

Միլլի մեջլիսի նիստին հրավիրված էին նաեւ մի շարք արեւմտյան պետությունների դեսպաններ:

Տես՝ էջ 2

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## Կաթողիկոսը՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի պաշտոնական հյուր

ԷՋՄԻԱԾԻՆ, 23 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Փետրվարի 23-ին Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը անդրանիկ պաշտոնական այցով մեկնել է եկեղեցիների համաշխարհային խորհուրդ:

Ինչպես հայտնում են Մայր աթոռի տեղեկատվության համակարգից, ժնեւ մեկնելիս Նորին սրբությունը երկօրյա կանգառ կունենա Մոսկվայում, որի ընթացքում առիթ կունենա անձամբ շնորհավորելու Մոսկվայի եւ Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսի Երկրորդին՝ պատրիարքի անվանակոչության օրվա առիթով: Վեհափառ հայրապետը կհանդիպի նաեւ մոսկվահայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Ժնեւում, լինելով ԵՀԽ-ի պաշտոնական հյուրը, Հայոց հայրապետը հանդիպումներ կունենա ԵՀԽ գլխավոր քարտուղար Կոնրադ Ռայզերի, ԵՀԽ ընդհանուր քարտուղարության, ինչպես նաեւ ԵՀԽ-ում Ուղղափառ եկեղեցիների ներկայացուցիչների հետ: ԵՀԽ գլխավոր քարտուղարը բազմաթիվ անգամներ է այցելել Մայր աթոռ Սբ. Էջմիածին, որի հետ համատեղ ԵՀԽ-ն բազմաթիվ սոցիալական ու բարեսիրական ծրագրեր է իրականացնում Հայաստանում: Այսօր էլ Սբ. Էջմիածնում հաջողությամբ գործում են ԵՀԽ երկու գրասենյակներ:

Ժնեւից Նորին սրբությունը կմեկնի Լոնդոն՝ ներկա լինելու մարտի 1-ին Բրիտանական գրադարանում «Գանձերը՝ տապանից» ցուցահանդեսի բացմանը՝ նվիրված Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին: Վաչե եւ Թամար Մանուկյանների հիմնադրամի մեկենասությամբ կազմակերպված ցուցահանդեսում ներկայացվելու են հայ եկեղեցական արվեստի նմուշներ Մայր աթոռի, ինչպես նաեւ աշխարհի այլ թանգարաններից:

## Երեւանում հանդես կգա Լա Սկալայի նվագախումբը՝ Ռիկարդո Մուտիի ղեկավարությամբ

Հուլիսի 23-ին Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարությամբ պետական ծրագրի շրջանակներում, Երեւանում համերգով հանդես կգա Լա Սկալայի սիմֆոնիկ նվագախումբը՝ աշխարհահռչակ Ռիկարդո Մուտիի ղեկավարությամբ: Համերգի կազմակերպման եւ հեռարձակման հետ կապված անհրաժեշտ մանրամասներ ճշտելու եւ քննարկելու նպատակով Հայաստան է ժամանել Ռավեննայի փառատոնի եւ Իտալիայի ազգային հեռուստատեսության պատասխանատուներից կազմված պատվիրակությունը: Նրանց ընդունեց 1700-ամյակի տոնակատարության կազմակերպման պետական հանձնաժողովի փոխնախագահ Խոսրով Հարությունյանը: Հանդիպման ընթացքում քննարկվեցին կազմակերպչական եւ տեխնիկական մի շարք հարցեր:

Երեւանում գտնվելու ընթացքում պատվիրակությունը հանդիպումներ կունենա Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում, Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանի եւ այլ պաշտոնյաների հետ:

*1700-ԱՄՅԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԼՐՏ. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ*

## Քոչարյան-Ալիեւ հանդիպումը՝ մարտի 3-ին

*Նախագահների փարիզյան բանակցությունները կշգվեն երեք օր*




Մարտի 3-ին Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակի հրավերով Փարիզ կժամանի Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւը: Ադրբեջանի նախագահի մամլո ծառայությունը հաղորդում է, որ Փարիզում Հ. Ալիեւը Լեռնային Ղարաբաղի խաղաղ կարգավորման շուրջ բանակցությունների հերթական փուլը կանցկացնի Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ: Նախ տեղի կունենա Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների երես առ երես հանդիպումը, ապա բանակցություններին կմիանա Ֆրանսիայի նախագահը:

Ադրբեջանական «Բիլիք Դունյասի» գործակալությունը հաղորդում է, որ Քոչարյան-Ալիեւ հանդիպումը կշարունակվի երեք օր:

Ի դեպ, սա երկու երկրների նախագահների 15-րդ հանդիպումն է, որը նախորդ 14 հանդիպումներից տարբերվելու է ժամանակային տեւողությամբ՝ երեք օր: Նախորդ 14 հանդիպումներից յուրաքանչյուրը տեւել է առավելագույնը 2,5-3 ժամ:

Բաքվի դիտորդների կարծիքով ԼՂ հակամարտության կարգավորումը մտել է վճռական փուլ:

## Միայն ուժեղ Ռուսաստան

ՄՈՍԿՎԱ, 23 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Վերջին տարիների իրադարձությունները ցույց տվեցին, որ մեր երկրի համար այլընտրանքը պարզ է՝ կամ Ռուսաստանը կլինի ուժեղ, կամ ընդհանրապես չի լինի»: Այդ մասին Կրեմլում Հայրենիքի պաշտպանների օրվան նվիրված հանդիսավոր երեկույթի ժամանակ հայտարարել է ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը: Վերջին տասը տարիները ռուսաստանցի զինվորականների համար «շատ դժվարին, կարելի է ասել՝ դրամատիկ էին», սակայն «դուք կարողացաք վերականգնել հարգանքը բանակի նկատմամբ, զինվորի ու սպայի հեղինակությունը», ընդգծել է Պուտինը:

ԵՐԵՎԱՆ

## «Դեպի քաղաքակրթությունների երկխոսություն»

*Գլոբալիզացիան եւ Հայաստանը*



Երեկ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում «Դեպի քաղաքակրթությունների երկխոսություն» խորագրի ներքո կազմակերպվեց «Գլոբալիզացիան եւ Հայաստանը՝ տարբերակներ եւ մոտեցումներ» կլոր սեղան, որին մասնակցում էին ՀՀ-ում հավատարմագրված բոլոր դեսպանությունների ներկայացուցիչներ, բացառությամբ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի եւ Ուկրաինայի: Կլոր սեղանը կազմակերպել էին ՀՀ-ում Իրանի դեսպանությունն ու «Ներդաշնակ աշխարհ» 14 հասարակական կազմակերպությունների միությունը:

Կլոր սեղանի նպատակն էր կարծիքներ փոխանակել հետեւյալ հարցերի շուրջ. Հայաստանի ազգային անվտանգությունը եւ գլոբալիզացիան, ի՞նչ զարգացման հնարավորություններ եւ սպառնալիքներ է առաջ բերում գլոբալիզացիան հայկական պետության, հասարակության, մշակույթի եւ տնտեսության համար, կա՞ն արդյոք Հայաստանում միջազգային հարաբերությունների սերտացմամբ պայմանավորված սպառնալիքներին դիմակայելու կամ հնարավորություններն օգտագործելու պետական, հասարակական կամ մշակութային համակարգեր եւ մեխանիզմներ, «քաղաքակրթությունների երկխոսություն», «գլոբալիզացիա» տրանց արտահայտման ձեւերը Հայաստանում:

Կլոր սեղանի աշխատանքները կավարտվեն այսօր «Գեոէկոնոմիկա եւ տնտեսություն» թեմայի զեկուցումով: **«Ազգը»** իր առաջիկա համարում ամփոփ անդրադարձ կկատարի կլոր սեղանի թեմաներին:

Թ. Հ.

